9
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2020

Luys Lnyu®



ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 75-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 75-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀՀ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱԿ-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 1

2. ՀՀ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱԿ-Ի ԳԱ 75-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի խորհրդանշական 75-րդ նստաշրջանը, որն առաջին անգամ անցկացվում է հիմնականում առցանց ձևաչափով, իր վրա է սևեռել ողջ աշխարհի ուշադրությունը՝ հատկապես հաշվի առնելով կորոնավիրուսի համաճարակի հետևանքով ի հայտ եկած գլոբալ ճգնաժամը և հակահամաճարակային պայքարում միջազգային առաջնորդության վակուումը: Ինչպես հայտնի է, երկրների մեծ մասը ՄԱԿ-ի ԳԱ ամբիոնը օգտագործում են արտաքին քաղաքական տարաբնույթ հարցերի շուրջ իրենց հիմնական մոտեցումները ներկայացնելու նպատակով: Այդ ամբիոնից հնչող ելույթները զուտ իրավիճակի նպատակահարմարությունից բխող տեքստեր չեն, այլ անցնում են լուրջ նախապատրաստական փուլ և բխում են տվյալ երկրների ռազմավարական պատկերացումներից: Այս առումով, հաշվի առնելով նաև հուլիսյան իրադարձություններից հետո երկու երկրների միջև աճող լարվածությունը, կարևոր է հասկանալ, թե ինչպես ՄԱԿ-ի գլխավոր ամբիոնը օգտագործվեց Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից՝ իրենց հիմնական ուղերձը աշխարհին ու սեփական հանրությանը մատուցելու նպատակով:

Ինչպես Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այնպես էլ Ադրբեջանի նախագահ Ալիևը այս տարի հնարավորություն ունեին ՄԱԿ-ի ամբիոնից երկուական ուղերձ հղել: Առաջինը երկու երկրների ղեկավարները ելույթ ունեցան ՄԱԿ-ի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառման շրջանակներում, իսկ Գլխավոր Ասամբլեայի ընդհանուր քննարկումների ժամանակ հանդես եկան հիմնական ելույթներով: Ալիևը ՄԱԿ-ի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ հնչեցրեց 2 ելույթ՝ մեկը որպես Չմիացման շարժման կազմակերպության նախագահող, մյուսը որպես Ադրբեջանի նախագահ: Նշենք նաև, որ իր հիմնական ելույթում Հայաստանին անդրադարձավ և վերջինիս նկատմամբ մեղադրանքներ հնչեցրեց նաև Թուրքիայի նախագահ Էրդողանը: Սույն հոդվածի շրջանակներում փորձենք անդրադառնալ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների ելույթների հիմնական շեշտադրումներին՝ դրանք դիտարկելով համեմատության մեջ:

1. ՀՀ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱԿ-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես նշվեց, այս անգամ ՄԱԿ-ի ԳԱ-ի շրջանակներում երկրների ղեկավարները բացի ընդհանուր քննարկումների ժամանակ ավանդական ելույթներից՝ հնարավորություն ունեին ելույթներ ունենալ նաև ՄԱԿ-ի հիմնադրման

75-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ: Ադրբեջանի նախագահը այս միջոցառման ժամանակ հնչեցրեց 2 ելույթ, քանի որ այս տարի Ադրբեջանը նախագահում է Չմիացման շարժման կազմակերպությունում. առաջին ելույթը ունեցավ որպես այդ կառույցի նախագահող: Չնայած միջոցառումն իրականացվում էր առցանց եղանակով, և ելույթները ուղարկվել էին տեսագրված ձևաչափով, Ադրբեջանի նախագահի ելույթները՝ ըստ հերթականության, երկու անգամն էլ տեղադրվեցին ավելի շուտ, քան հայկական կողմինը: Այսպես, անդրադառնանք նրան, թե ինչ ուղերձներ էին պարունակում Ալիևի և Փաշինյանի առաջին ելույթները՝ ընդգծելով հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ շեշտադրումները:

ՀՀ վարչապետի ելույթի հիմնական շեշտադրումները ՄԱԿ-ի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ[1]	**Ադրբեջանի նախագահի ելույթի հիմնական շեշտադրումները ՄԱԿ-ի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ[2]**
Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի շեշտադրում, ՄԱԿ-ի գործունեության տեսանկյունից դրա կարևորության ընդգծում:	Հայաստանը ներկայացնում է որպես օկուպանտ և ագրեսոր, նշում է, որ Հայաստանը չի իրագործել ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը:
Միջազգային հարաբերություններում սպառնալիքի կամ ուժի կիրառման արգելքի կարևորության ընդգծում:	Հայաստանին մեղադրում է «էթնիկ զտումների», Խոջալուի «ցեղասպանության», «միլիոնից ավելի փախստականների» արտաքսման մեջ:
Ակնարկ տարածաշրջանում ապակայունացնող դերակատարություն ունեցող պետությունների սպառնալիքին: Մասնավորապես, <u>առանց Թուրքիային ու Ադրբեջանին ուղղակի հիշատակելու</u>, վարչապետը իր ելույթում նշել է «աշխարհի չորս ծագերում, այդ թվում՝ մեր տարածաշրջանում, անխոհեմ	Հայաստանին մեղադրում է «օկուպացված» տարածքների ապօրինի բնակեցման, Ադրբեջանի մշակութային ժառանգությունը ոչնչացնելու մեջ:

[1] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/09/22/Nikol-Pashinyan-Speech-UN/

[2] https://azertag.az/ru/xeber/V_ramkah_75_i_sessii_Generalnoi_assamblei_OON_sostoyalos_Zasedanie_vysokogo_urovnya_posvyashchennoe_75_letiyu_OON__Prezident_Azerbaidzhana_predsedatel_Dvizheniya_neprisoedineniya_vystupil_na_zasedanii_v_videoformate_VIDEO-1591127

ռևիզիոնիստները փորձում են օգտվել միջազգային կարգի նշմարվող թուլությունից՝ իրական վտանգ ներկայացնելով միջազգային խաղաղության և անվտանգության համար:	
	Մեղադրում է խաղաղ բնակչությունը թիրախավորելու մեջ:
	Հուլիսյան սադրանքի մեղքը գցում է հայկական կողմի վրա և մեղադրում «խաղաղ բնակչության սպանության» համար:
	Հայաստանին մեղադրում է օգոստոսին իբրև թե իրականացված դիվերսիայի մեջ, նշում է, թե իբր գերի ընկած հայ զինվորը խոստովանել է ահաբեկչությունների նախապատրաստման մասին:
	ՀՀ վարչապետին մեղադրում է բանակցությունների ձևաչափը փոխելու փորձերի մեջ՝ «Ղարաբաղը Հայաստան է և վերջ» ու 7 սկզբունքների մասին վարչապետի հայտարարությունները ներկայացնելով որպես բանակցային գործընթացին հասցված լուրջ հարված:
	Առաջ է քաշում խաղաղության հասնելու համար նախապայման՝ պահանջելով ՀՀ ԶՈՒ դուրսբերում Ադրբեջանի «բոլոր օկուպացված տարածքներից»:
	Հայաստանը որպես ռազմատենչ և ագրեսոր ներկայացնելու նպատակով հիշատակում է աշխարհազորի ստեղծման հանգամանքը և ՀՀ ՊՆ Դավիթ Տոնոյանի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» հայտարարությունը:

	Հերթական անգամ Հայաստանին մեղադրում է նացիզմի մեջ՝ կրկին հիշելով Նժդեհին:
	Փորձում է հետագա հնարավոր ռազմական գործողությունների պատասխանատվությունը գցել հայկական կողմի վրա՝ նշելով, թե իբր Հայաստանը պատրաստվում է Ադրբեջանի դեմ «նոր ագրեսիայի» և ՄԱԿ-ին ու միջազգային հանրությանը կոչ անելով զսպել Հայաստանի «հերթական ագրեսիան»:
	Հայաստանը որպես ագրեսոր ներկայացնելու համատեքստում փորձում է ՀՀ ռազմական և անվտանգության ռազմավարությունները ներկայացնել իբրև թե որպես հարձակողական:
	Որպես հակամարտության կարգավորման նախապայման նշում է, որ այն պետք է կարգավորվի՝ հաշվի առնելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի իրագործումը:
	Ադրբեջանի միջազգային հեղինակությունը ընդգծելու նպատակով հիշեցնում է Չմիացման շարժման նախագահությունը 120 երկրների աջակցությամբ ստանձնելու հանգամանքը:
	Համավարակի դեմ պայքարում նշում է, թե Ադրբեջանը ԱՀԿ-ին 10 մլն դոլարի աջակցություն է տրամադրել և հումանիտար ու մարդասիրական

	օժանդակություն է տրամադրել 30 երկրների:
	Փորձում է Ադրբեջանը ներկայացնել որպես «մուլտիկուլտուրալիզմի, հանդուրժողականության և ժողովրդավարության օրրան»:

Ինչպես տեսնում ենք, գործ ունենք երկու բացառիկ անհամարժեք ելույթների հետ: Եթե Հայաստանի վարչապետը առհասարակ չի հիշատակում Ադրբեջանին և որևէ ուղղակի անդրադարձ չի կատարում ԼՂ հակամարտությանը, ապա Ալիևի ելույթի 90%-ը նվիրված է ԼՂ հակամարտությանն ու Հայաստանին: Հայաստանը միշտ էլ միջազգային հարթակներում հանդես է եկել ավելի կառուցողական կեցվածքով և խուսափել է Ադրբեջանի հետ պարզունակ «լեզվակռվի» մեջ մտնելու որոգայթից, սակայն դա չի խանգարել, որպեսզի Ադրբեջանի ագրեսիվ և սադրիչ հայտարարությունները համարժեք պատասխան ստանան ՀՀ ղեկավարների ելույթներում: Դժվար չէր նախապես կանխատեսել, որ Ալիևը ՄԱԿ-ի բարձր ամբիոնն օգտագործելու է միջազգային հանրության շրջանում սեփական ապատեղեկատվությունը տարածելու, Հայաստանին ու Արցախին վարկաբեկելու նպատակով, հետևաբար խիստ անհրաժեշտ էր, որպեսզի Հայաստանը համարժեք ձևով հակազդեր Ադրբեջանի այդ հավանական պահվածքին: Այնինչ Հայաստանի վարչապետը իր ելույթում բավարարվեց թերևս ինքնորոշման իրավունքի և ուժի ու սպառնալիքի չկիրառման շեշտադրմամբ և առանց Թուրքիային ու Ադրբեջանին ուղղակի նշելու՝ տարածաշրջանում ապակայունացնող դերակատարների վերացական հիշատակմամբ: Տարօրինակ է, որ վարչապետը առհասարակ չանդրադարձավ ԼՂ հակամարտությանը. եթե նման մարտավարության նպատակն այն էր, որ հետո այդ խնդրին անդրադառնալու էր ընդհանուր քննարկումների ելույթի ժամանակ, ապա այն չի կարելի ճիշտ մարտավարություն համարել, քանի որ այդ ելույթը տեղի ունեցավ Ալիևի ելույթից մի քանի օր անց միայն և բաց թողնվեց հակառակորդին ճիշտ ժամանակին և համարժեք հարթակից հակադարձելու հնարավորությունը: Ավելին, նախքան Փաշինյանի հերթական ելույթը, Ալիևը այդ բարձր հարթակից ևս մեկ ելույթի հնարավորություն ուներ, որը նույնպես օգտագործեց հակահայկական քարոզչության նպատակով: Ալիևը հերթական անգամ փորձեց միջազգային հարթակներում Հայաստանին ներկայացնել որպես ագրեսոր՝ հող նախապատրաստելով իր հետագա սադրանքների համար: Ուշագրավ էր նաև համավարակի դեմ պայքարի հարցում Ադրբեջանի միջազգային ջանքերի, ԱՀԿ-ին և այլ երկրներին տրամադրված օգնության հիշատակումը, որով Ալիևը փորձում էր

կրկին ընդգծել Ադրբեջանի հեղինակությունը, այնինչ Հայաստանի վարչապետը այս ուղղությամբ ասելու ոչինչ չուներ:

2. ՀՀ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱԿ-Ի ԳԱ 75-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները ՄԱԿ-ի ԳԱ-ի 75-րդ նստաշրջանի շրջանակներում իրենց հիմնական ելույթներն ունեցան ավելի ուշ, և կրկին առաջին ելույթը Ադրբեջանի նախագահինն էր: Ալիևի այս ելույթը աչքի ընկավ բացարձակ ագրեսիվությամբ և Հայաստանի հանդեպ մեղադրանքների տարափով: Ելույթից ստացված տպավորությունն այնպիսին է, որ կարծես ելույթի հեղինակները հավաքագրել էին ադրբեջանական հակահայկական քարոզչության վերջին տարիների բոլոր թեզերը և դրանք առանց բացառության ներառել մեկ ելույթի շրջանակներում: Բնականաբար ակնկալվում էր, որ գոնե հիմնական ելույթում ՀՀ վարչապետը պետք է վերջապես հակադարձեր Ալիևի հերյուրանքներին, և շատ կարևոր էր, որ այդ արձագանքը համարժեք լիներ: Հոդվածի այս հատվածում փորձենք հասկանալ, թե հիմնական ելույթների ժամանակ որոնք էին Հայաստանի հասցեին Ալիևի հիմնական մեղադրանքները, դրանցից որոնց արձագանքեց Փաշինյանը և ինչ հակադարձ մեղադրանքներ հնչեցրեց Ադրբեջանի հասցեին:

Ադրբեջանի նախագահի ելույթի հիմնական շեշտադրումները ՄԱԿ-ի ԳԱ 75-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումների ժամանակ[3]	**ՀՀ վարչապետի ելույթի հիմնական շեշտադրումները ՄԱԿ-ի ԳԱ 75-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումների ժամանակ**[4]
Հայաստանը ներկայացնում է որպես օկուպանտ և ագրեսոր, նշում է, որ Հայաստանը չի իրագործել ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը՝ դրանք ներկայացնելով խեղաթյուրված ձևով:	Չկա հակադարձում:
Թեմային անդրադարձ չկա:	Հայաստանը միանշանակ աջակցությունն է հայտնում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝

[3] https://azertag.az/ru/xeber/Prezident_Ilham_Aliev_vystupil_na_obshchih_debatah_v_videoformate_75_i_sessii_Generalnoi_Assamblei_OON_VIDEO-1594357

[4] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/09/25/Nikol-Pashinyan-General-Assembly/

	համաշխարհային զինադադար հաստատելու կոչին և COVID-19-ի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ թիվ 2532 բանաձևին, որը պահանջում է մարտական գործողությունների ընդհանուր և անհապաղ դադարեցում բոլոր իրավիճակներում: *(Սակայն չի նշում, որ ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանը չի միացել այդ կոչին:)*
Հայաստանին մեղադրում է «էթնիկ զտումների», Խոջալուի «ցեղասպանության», «միլիոնից ավելի փախստականների» արտաքսման մեջ:	Չկա հակադարձում: *(Տեղեկատվական պատերազմի տեսանկյունից նպատակահարմար էր, որպեսզի ՀՀ վարչապետը նույնպես մատնանշեր Ադրբեջանի պատերազմական հանցագործություններն ու հայ բնակչության տեղահանությունները՝ այդ թվում Սումգայիթի, Բաքվի ջարդերը:)*
Նշում է, որ ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը չկատարելու համար Հայաստանի դեմ պետք է պատժամիջոցներ կիրառվեն:	Չկա հակադարձում: *(Պետք էր նշել, որ Ադրբեջանի՝ որպես ագրեսոր պետության դեմ պետք է կիրառվեն պատժամիջոցներ:)*
Հայաստանին մեղադրում է «օկուպացված» տարածքների ապօրինի բնակեցման, լիբանանահայերով բնակեցնելու մեջ՝ այն ներկայացնելով իբրև միջազգային իրավունքի և 1949թ. Ժնևի կոնվենցիայի խախտում:	Չկա հակադարձում: *(Որպես Ադրբեջանի հայազտման քաղաքականության արտացոլում պետք էր հիշեցնել Նախիջևանի հայաթափման փաստը՝ ակնարկելով, որ նույն ճակատագիրը կարող էր սպառնալ նաև ԼՂՀ-ին:)*
Մեղադրում է Ադրբեջանի մշակութային ժառանգությունը ոչնչացնելու մեջ:	Չկա հակադարձում: *(Պետք էր հիշեցնել Նախիջևանում և Ադրբեջանում, ինչպես նաև Թուրքիայում հայկական և այլ ազգերին*

	պատկանող մշակութային ժառանգության ոչնչացման փաստերը: Որպես այլոց մշակութային արժեքները յուրացնելու և ոչնչացնելու թարմ օրինակ՝ կարելի էր հիշատակել նաև Սուրբ Սոֆիայի տաճարի ճակատագիրը:)
Նշում է, թե իբր Հայաստանը ապօրինաբար օգտագործում է «օկուպացված տարածքների» բնական ռեսուրսները, Արցախում գործող բիզնեսին սպառնում միջազգային իրավական գործընթացով:	Չկա հակադարձում: *(Պետք էր նշել Արցախի և Հայաստանի շրջափակման, բիզնեսի համար խոչընդոտներ ստեղծելու Ադրբեջանի և Թուրքիայի քաղաքականության մասին:)*
Հայաստանին մեղադրում է խաղաղ բնակչությանը թիրախավորելու մեջ՝ հիշատակելով 2016թ. ապրիլի, 2017թ. հուլիսի, 2020թ. հուլիսի իրադարձությունները:	Ադրբեջանին մեղադրում է հուլիսին խաղաղ բնակչությանը թիրախավորելու մեջ: *(Սակայն չի նշում խաղաղ բնակչությանը թիրախավորելու և վերջիններիս նկատմամբ անմարդկային գործողությունների նախկին փաստերը, այդ թվում՝ 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ:)*
Ինչպես 2016թ. ապրիլյան պատերազմի, այնպես էլ 2020թ. ռազմական գործողությունների սանձազերծման մեղքը գցում է հայկական կողմի վրա:	Ադրբեջանին մեղադրում է հուլիսին նախահարձակ գործողություններ սանձազերծելու մեջ: *(Ի տարբերություն Ալիևի՝ չի հիշատակում նաև Ադրբեջանի նախկին նախահարձակ գործողությունները:)*
Նշում է, թե իբր հուլիսի գործողությունները Հայաստանը նախաձեռնել էր՝ բանակցային գործընթացը վիժեցնելու, Ադրբեջանի ռազմավարական ենթակառուցվածքները թիրախավորելու և երրորդ երկրներին ներքաշելու նպատակով:	Չկա հակադարձում: *(Պետք էր հիշեցնել նախքան հուլիսյան իրադարձությունները Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանության խորացումը, բանակցություններից դժգոհելու և ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին քննադատելու փորձերը, ինչպես նաև շեշտադրել, որ*

	հուլիսյան սադրանքը նպատակ էր հետապնդում Թուրքիային ավելի ներքաշել Արցախյան հակամարտության մեջ:)
Նշում է, թե իբր հուլիսյան գործողությունների ժամանակ Հայաստանը պարտվել է՝ որպես ապացույց փորձելով ներկայացնել ՀԱՊԿ-ին դիմելու հանգամանքը:	Չկա հակադարձում: *(Եթե ներքին լսարանի համար վարչապետը պարբերաբար շեշտում է, որ հայկական կողմը հաղթանակ է տարել, ապա ՄԱԿ-ի ամբիոնից հաղթանակի մասին խոսք չեղավ, միայն նշվեց Ադրբեջանի ռազմական գերակայության առասպելը ի չիք դարձնելու մասին:)*
Չկա հակադարձում: *(Ադրբեջանը շեշտը դնում է սուբսպանտիվ բանակցությունների վրա և հայկական կողմին մեղադրում ստատուս քվոն պահպանելու ձգտման մեջ:)*	Հիշեցնում է տեղում հրադադարի ամրապնդման անհրաժեշտության՝ մասնավորապես ռազմաշունչ հռետորաբանության և ատելության խոսքից հրաժարում, շփման գծում ԵԱՀԿ ներկայացուցչի դիտորդական առաքելության ընդլայնում, հրադադարի դեպքերի խախտման հետաքննության մեխանիզմների ներդրում, տեղի հրամանատարների միջև ուղիղ կապի հաստատում: *(Ուշագրավ է, որ վարչապետը շարունակում է խուսափել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների ուղղակի հիշատակումից, սակայն կարևոր է, որ փորձ է արվում դրանք ամեն դեպքում վերադարձնել օրակարգ)*
Հայաստանին մեղադրում է օգոստոսին իբրև թե իրականացված դիվերսիայի մեջ, նշում է, թե իբր գերի ընկած հայ զինվորը խոստովանել է	Չկա հակադարձում: *(Պետք էր նշել դիվերսիոն ներթափանցման փորձերի միջոցով իրավիճակը պարբերաբար*

ահաբեկչությունների նախապատրաստման մասին:	*ապակայունացնելու Ադրբեջանի քաղաքականության մասին, հիշեցնել Ադրբեջանի ՊՆ դժգոհությունը շփման գծում դիտարկման սարքերի տեղադրման կապակցությամբ:)*
Հայաստանին մեղադրում է «բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքով գերիների փոխանակման առաջարկը մերժելու մեջ:	Չկա հակադարձում: *(Կարևոր առիթ էր միջազգային հարթակում Ադրբեջանում վերջերս հայտնված հայ գերիների խնդիրը բարձրաձայնելու համար: Պետք էր շեշտել հայ գերիների նկատմամբ ադրբեջանական կողմի կտտանքների, մոլորված քաղաքացիներին որպես դիվերսանտներ ներկայացնելու, իսկ սեփական գերված զինվորներին որպես խաղաղ քաղաքացիներ ներկայացնելու փորձերը:)*
ՀՀ վարչապետին մեղադրում է բանակցությունների ձևաչափը փոխելու փորձերի մեջ՝ «Ղարաբաղը Հայաստան է և վերջ» ու 7 սկզբունքների մասին վարչապետի հայտարարությունները ներկայացնելով որպես բանակցային գործընթացին հասցված լուրջ հարված:	Չկա հակադարձում: *(Պետք էր հիշեցնել, որ Ադրբեջանն է հուլիսյան դեպքերից հետո փոխել ԱԳ նախարարին և փորձում է տորպեդահարել բանակցությունները՝ միաժամանակ կոշտացնելով ռազմատենչ հռետորաբանությունը:)*
(Ալիևը այս և այլ հարցերի հայտարարությունները որակում է որպես բանակցությունների ֆորմատը փոխելու և դրանց հարված հասցնելու փորձեր)	Նշում է, որ Ղարաբաղի ժողովրդի ընտրած իշխանությունները պետք է կարողանան մասնակցել բանակցություններին:
Չկա հակադարձում:	Նշում է, որ հակամարտության գոտում բնակվող մարդկանց խնդիրներն ու կարիքները պետք է դառնան բանակցությունների օրակարգի գերակայություն:

Չկա հակադարձում:	Նշում է, որ առանցքային գերակայություն է անվտանգության գոյաբանական սպառնալիքների ենթարկվող Արցախի ժողովրդի համապարփակ անվտանգության ապահովումը:
Չկա հակադարձում: *(Ալիևի ելույթում փոխզիջման մասին առհասարակ խոսք չկա:)*	Որպես հակամարտության տևական և համապարփակ կարգավորման համար անհրաժեշտ նախապայման է նշում ազատությունը, ժողովրդավարությունը և մարդու հիմնարար իրավունքների հարգումը՝ հավելելով, որ միայն օրինականորեն ընտրված կառավարություններն են ի զորու իրապես արտահայտել իրենց ժողովրդի շահերը և գնալ փոխզիջման:
Առաջ է քաշում խաղաղության հասնելու համար նախապայման՝ պահանջելով ՀՀ ԶՈՒ դուրսբերում Ադրբեջանի «բոլոր օկուպացված տարածքներից»:	Չկա հակադարձում:
Հայաստանին որպես ռազմատենչ և ագրեսոր ներկայացնելու նպատակով հիշատակում է աշխարհազորի ստեղծման հանգամանքը և ՀՀ ՊՆ Դավիթ Տոնոյանի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» հայտարարությունը:	Չկա հակադարձում:
Հայաստանին մեղադրում է Ադրբեջանի կարևոր ենթակառուցվածքները խոցելու սպառնալիքների մեջ՝ նշելով, թե իբր հայկական կողմը սպառնում է հարվածել Մինգեչաուրի ջրամբարին և Բաքվի նավթահորերին:	Հիշեցնում է Հայկական ատոմակայանը ռմբակոծելու Ադրբեջանի ՊՆ-ի սպառնալիքը՝ նշելով, որ այն հավասարազոր է «միջուկային ահաբեկչության» սպառնալիքի: *(Ակնհայտ է, որ Ալիևը կանխատեսել է այս հանգամանքի շեշտադրումը Փաշինյանի ելույթում, հետևաբար*

	փորձել է նախահարձակ լինել: Վարչապետը պետք է հստակ ընդգծեր, որ Հայաստանը երբեք պաշտոնական մակարդակում նման սպառնալիքներ չի հնչեցրել, ինչպես նաև հիշեցներ Երևանը, Հայաստանի մյուս տարածքները գրավելու Ադրբեջանի կողմից ամենաբարձր մակարդակով արված բազմաթիվ հայտարարությունների փաստը:)
(Ալիևը փորձում է ներկայացնել, որ հուլիսյան գործողությունների ժամանակ ադրբեջանական կողմը հաղթանակ է տարել:)	Նշում է, որ հուլիսյան մարտերն ի դերև հանեցին Ադրբեջանի ռազմական գերազանցության մասին առասպելը և հաստատեցին, որ ղարաբաղյան հակամարտությունը ռազմական լուծում չունի: *(Միաժամանակ կարելի էր հիշատակել նաև 2016թ. ռազմական գործողությունները, այլապես ստացվում է, որ վարչապետը ևս մեկ անգամ խուսափում է ժխտել այդ պատերազմում Հայաստանի «պարտության» մասին առասպելը:)*
Հայաստանին մեղադրում է երրորդ երկրներից ահաբեկիչների ներգրավման մեջ:	Չկա հակադարձում: *(ԱԳ նախարար Մնացականյանը իր վերջին հարցազրույցներում նշում է Թուրքիայի միջոցով Հայաստանի դեմ պայքարում ահաբեկիչների ներգրավման փաստերի մասին, ուստի տրամաբանական կլիներ, եթե վարչապետը նույնպես հիշատակեր այս հանգամանքը:)*
Փորձում է Հայաստանը ներկայացնել որպես ահաբեկչությունը ֆինանսավորող երկիր՝ հիշատակում է	Չկա հակադարձում: *(Կարելի էր հիշատակել Ադրբեջանի՝ որպես ահաբեկչական պետության*

ԱՍԱԼԱ-ի գործունեությունը, Վարուժան Կարապետյանին, Նժդեհին:	*բազմաթիվ փաստեր՝ այդ թվում Սաֆարովի դեպքը և վերջերս Եվրոպական դատարանի կայացրած որոշումը:)*
Հայաստանը որպես ագրեսոր ներկայացնելու համատեքստում փորձում է ՀՀ ռազմական և անվտանգության ռազմավարությունները ներկայացնել իբրև թե որպես հարձակողական:	Չկա հակադարձում:
Փորձում է հետագա հնարավոր ռազմական գործողությունների պատասխանատվությունը գցել հայկական կողմի վրա՝ նշելով, թե իբր Հայաստանը պատրաստվում է Ադրբեջանի դեմ «նոր ագրեսիայի» և ՄԱԿ-ին ու միջազգային հանրությանը կոչ անելով զսպել Հայաստանի «հերթական ագրեսիան»:	Նշում է, որ Հայաստանը վերահաստատում է ԼՂ հակամարտության բացառապես խաղաղ կարգավորմանն իր հավատարմությունը: *(Պետք էր ընդգծել՝ ի տարբերություն Ադրբեջանի, որը պարբերաբար սպառնում է խնդիրը լուծել ռազմական ճանապարհով և դեռ հայկական կողմին էլ մեղադրում է ագրեսիայի մեջ:)*
Դժգոհում է ՄԽ համանախագահների գործունեությունից՝ նշելով, որ բանակցային գործընթացին պետք է ակտիվորեն ներգրավվեն ՄԽ բոլոր 11 անդամները:	Չկա հակադարձում:
Հիշատակելով ՄԱԿ-ի ԱԽ 853 բանաձևը՝ նշում է, որ պետք է կազմվի «օկուպացված տարածքներից» Հայաստանի ԶՈՒ-ի դուրսբերման թարմացված ժամանակավոր ժամանակացույց՝ հայտարարելով, որ ՄԱԿ-ի համապատասխան ինստիտուտները պետք է նպաստեն բանաձևի իրագործմանը:	Չկա հակադարձում:

Որպես նախապայման նշում է, որ հակամարտությունը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում:	Նշում է, որ կարգավորման գործընթացի հիմքում պետք է ընկած լինի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, որը ճանաչվել է միջազգային հանրության և միջազգային միջնորդների, մասնավորապես ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից: *(Կարելի էր ընդգծել նաև, որ ինքնորոշման իրավունքը չի կարելի հակադրել տարածքային ամբողջականության սկզբունքին՝ ավելի մանրամասն ներկայացնելով Արցախի ինքնորոշման գործընթացի իրավական հիմնավորումները և Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերաբերյալ շահարկումների իրավական մերկությունը:)*
Չկա հակադարձում: *(Ադրբեջանը ինքնորոշման իրավունքի կիրառումը պատկերացնում է բացառապես Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» շրջանակներում:)*	Նշում է, որ ինքնորոշման իրավունքի ուժով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պետք է կարողանա առանց սահմանափակումների որոշել իր կարգավիճակը: *(Կարևոր է առանց սահմանափակումների շեշտադրումը, սակայն ավելի հստակ ուղերձ հղելու տեսանկյունից պետք էր նաև ընդգծել, որ ինքնորոշման իրավունքի իրացումը հնարավոր է բացառապես Ադրբեջանի կազմից դուրս:)*
Հայտարարում է՝ «Ղարաբաղը Ադրբեջան է!»	Չկա հակադարձում: *(Եթե վարչապետի՝ «Արցախը Հայաստան է և վերջ» հայտարարությունը ուղղված էր ներքին լսարանին և երբևիցե չի բարձրաձայնվում միջազգային հարթակներում, ապա Ալիևը հնարավոր*

	բոլոր միջազգային հարթակներում հայտարարում է, թե «Արցախը Ադրբեջան է»:)
Անհանգստություն է հայտնում Հայաստանին զենքի մատակարարման կապակցությամբ՝ նշելով, թե հուլիսյան իրադարձություններից հետո ավելի քան 1000 տոննա զենք է մատակարարվել Հայաստանին: Նշում է, որ Հայաստանին զենքը մատակարարվում է անվճար (այս ակնարկը ակնհայտորեն ուղղված էր ՌԴ-ի դեմ):	Նշում է, որ Ադրբեջանին իր միակողմանի աջակցությամբ և այնտեղ ռազմական ներկայության ընդլայնմամբ Թուրքիան վիժեցնում է տարածաշրջանում խաղաղություն և կայունություն հաստատելու ջանքերը՝ հիշեցնելով ՀՀ և ԼՂՀ անմիջական հարևանությամբ Ադրբեջանի հետ անցկացնելով սադրիչ բնույթի համատեղ զորավարժությունների մասին:
(ՄԱԿ-ում իր ելույթի ժամանակ Հայաստանի հասցեին մեղադրանքներ էր հնչեցրել Թուրքիայի նախագահ Էրդողանը:)	Ընդգծում է, որ Թուրքիան իր քաղաքականությունը կառուցում է հակամարտությունների շահագործման, Հայոց ցեղասպանության արդարացման և այդ հանցագործության անպատժելիության վրա՝ ուղղակիորեն սպառնալով Հայաստանին: *(Կարելի էր նշել թուրքական կողմից հնչեցվող այն հայտարարությունները, որտեղ վերջիններս ներկայանում են որպես հակամարտության կողմ, բարձրաձայնել ՄԽ-ում վերջինիս մասնակցության նպատակահարմարության հարցը:)*
Հայաստանի իշխանություններին մեղադրում է մարդու իրավունքների խախտման, դիկտատուրայի մեջ՝ հիշատակելով հացադուլի արդյունքում ձերբակալված լրագրող Միեր Եղիազարյանի մահը:	Ադրբեջանի իշխանություններին մեղադրում է հակամարտությունն իրենց իշխանության հարատևությունն օրինականացնելու նպատակով օգտագործելու մեջ:

Հայտարարում է, որ Փաշինյանի իշխանությունը ֆինանսավորվում է Սորոսի կողմից:	Չկա հակադարձում:
Գնահատականներ է տալիս Հայաստանում կորոնավիրուսի հետ կապված իրավիճակին՝ այն համարելով «ահավոր» և նշելով, որ Ադրբեջանում արդյունավետ միջոցառումների շնորհիվ իրավիճակը վերահսկելի է: Որպես իր խոսքերի հավաստիք՝ նշում է, որ ԱՀԿ-ն Ադրբեջանը համարել է օրինակելի երկիր:	Նշում է, որ բարձր է գնահատում ՄԱԿ-ի, ԱՀԿ-ի առաջնային դերը համավարակի դեմ պայքարում: *(Այս հացում վարչապետը կարևոր ձեռքբերումներ բնականաբար չէր կարող մատնանշել, քանի որ Հայաստանը համավարակի դեմ պայքարում վատագույն ցուցանիշներն է գրանցել: Ընդ որում, ուշագրավ է, որ վարչապետը, ի տարբերություն ներքին լսարանին ուղղված գնահատականների, այստեղ չի նշում այլ երկրներում, մասնավորապես՝ Ադրբեջանում իրական պատկերը թակցնելու իր բազմիցս արած ակնարկները, մինչդեռ Ադրբեջանի նախագահը ակնհայտ մեղադրում է ՀՀ իշխանություններին համավարակի դեմ պայքարը ձախողելու մեջ:)*
Համավարակի դեմ պայքարում նշում է, թե Ադրբեջանը ԱՀԿ-ին 10 մլն դոլարի աջակցություն է տրամադրել և հումանիտար ու մարդասիրական օժանդակություն է տրամադրել 30 երկրների:	Շորհակալություն է հայտնում այն երկրներին, որոնք աջակցել են Հայաստանին համավարակի դեմ պայքարում՝ նշելով, որ Հայաստանը իր գործընկերներին տրամադրել է օգնության իր բաժինը: *(Ի տարբերություն Ադրբեջանի նախագահի՝ Հայաստանը ներկայացվում է որպես օգնության սպառող, այլ ոչ թե տրամադրող երկիր, կոնկրետ փաստեր չի նշվում, թե քանի երկրից ինչ օգնություն է տրամադրվել:)*
Փորձում է Ադրբեջանը ներկայացնել որպես հանդուրժողականության օրրան՝	Չկա հակադարձում:

հիշատակելով այս տարվա իր այցը Վատիկան և Ֆրանցիսկոս պապի Ադրբեջանին տված բնորոշումը՝ որպես «հանդուրժողականության օրինակ»:	
Չկա հակադարձում:	Հիշատակում է Մինչև 2050 թվականը Հայաստանի փոխակերպման ռազմավարության նախագիծը:
Ադրբեջանի միջազգային հեղինակությունը ընդգծելու նպատակով հիշեցնում է Զմիացման շարժման նախագահությունը 120 երկրների աջակցությամբ ստանձնելու հանգամանքը:	Հիշատակում է Հայաստանի մասնակցությունը ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեությանը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անդամի կարգավիճակը, ինչպես նաև Հայաստանի համար ցեղասպանությունների կախարգելման առաջնահերթությունը:
Առաջարկում է ՄԱԿ-ի հեղինակությունը բարձրացնելու նպատակով ստեղծել ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերն իրագործելու մեխանիզմներ:	Նշում է, որ մեզ անհրաժեշտ է արդյունավետ բազմակողմանիություն և, հետևաբար, ուժեղ և բարեփոխված Միավորված ազգերի կազմակերպություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսնում ենք, նաև այս ելույթների ժամանակ Ադրբեջանի նախագահի կողմից Հայաստանի հասցեին հնչեցված բազմաթիվ մեղադրանքներ մնացել են անպատասխան: Սա այն պարագայում, երբ Ադրբեջանը վերջին ամիսներին Հայաստանի դեմ ակտիվ հակաքարոզչություն է իրականացնում և փորձում է քարոզչական հող նախապատրաստել հերթական ռազմական գործողությունները սանձազերծելու համար: ՄԱԿ-ի ԳԱ-ի հարթակը լավագույն հնարավորությունն էր ընձեռում Ադրբեջանի սանձազերծած տեղեկատվական պատերազմում Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար, սակայն, ցավոք, այս հարթակը ևս պատշաճ ձևով չօգտագործվեց Հայաստանի կողմից: Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմին ակտիվորեն ներգրավված են նաև այդ երկրի խորհրդարանի խոսնակը, պատգամավորները, ԱԳՆ-ն և ՊՆ-ն, գրեթե բոլոր ԶԼՄ-ները, ինչպես նաև թուրքական կողմը, մինչդեռ Հայաստանից համարժեք արձագանքը բացակայում է, տրվող պատասխանները կցկտուր, ոչ լիարժեք և ոչ

համարժեք են: Նման իրավիճակում մեծ է վտանգը, որ հնարավոր ռազմական գործողությունների վերսկսման պարագայում Ադրբեջանը կարող է իր համար ավելի նպաստավոր տեղեկատվական ֆոն ապահովել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*